ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Արմինե Գրիգորի Զախարյան
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու

Ժամանակակից տնտեսական պայմաններում փոքր և միջին ձեռնարկությունները հանդիսանում են յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության ապահովման հիմնական երաշխիքը, քանի որ դրանք նպաստում են ժամանակակից արտադրական տեխնոլոգիաների ներդրմանը, ազգաբնակչության զբաղվածության ապահովմանն ու կենսամակարդակի բարելավմանը, արտահանման ծավալների ավելացմանը, պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացմանը, ինչպես նաև տնտեսական աճի արագացմանը: ՓՄՁ-ները ներկայացնում են արտադրական և վերամշակող ձեռնարկությունները, արհեստները, մանրածախ և մեծածախ առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման ոլորտը: Զարգացած երկրներում աշխատատեղերի 2/3-ը ստեղծում են փոքր և միջին ձեռնարկությունները՝ ապահովելով ՀՆԱ-ի 50-70%-ը: Հայաստանի Հանրապետությունում նշված ցուցանիշը վերջին տարիների ընթացքում չի հատել 43%-ի սահմանգիծը, և 01.01.2018թ. կազմել է 34.4[1]: Նույն ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնությունում ՓՄՁ տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 21.9%[2]:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) պաշտոնական տվյալների համաձայն՝ զարգացած երկրներում փոքր և միջին ձեռնարկություններում աշխատում է զբաղված բնակչության 60-70%-ը, իսկ Չինաստանում՝ 80%-ը: 2016թ. ՀՆԱ-ում ՓՄՁ տեսակարար կշիռը ԱՄՆ-ում կազմել է 50%, Մեծ Բրիտանիայում՝ 47%, Գերմանիայում՝ 57%, Չինաստանում 60%, Հնդկաստանում՝ 45%: Չինաստանում ՓՄՁ ոլորտին է պատկանում արտոնագրերի 65%-ը, տեխնիկական նորամուծությունների՝ 75%-ը և նոր արտադրանքի՝ ավելի քան 80%-ը[3]:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ապագան մեծապես պայմանավորված է փոքր և միջին ձեռնարկությունների

---

[1] ՓՄՁ-ի դերը Հայաստանի տնտեսության մեջ, Գործարարության աջակցման գրասենյակ, Երևան, 2018թ., http://www.bso.am/wp-content/uploads/2018/06/ՓՄՁ-ի-դերը-Հայաստանի-տնտեսության-մեջ-2017.pdf :

[2] Основные показатели деятельности малых предприятий (включая микропредприятия) по субъектам Российской Федерации за 2017 г., Публикация Росстата, https://gks.ru/free_doc/new_site/business/inst-preob/tab-mal_pr_m.htm .

[3] Влияние экосистемы МСП на мировую экономику, https://news.rambler.ru/economics/36936108-vliyanie-ekosistemy-msp-na-mirovuyu-ekonomiku/ .

թվաքանակի աստիճանական ավելացմամբ (հատկապես ինովացիոն ուղղվածությամբ): Ստորև ներկայացնենք ՀՀ ՓՄՁ ոլորտի արդյունաբերական կազմակերպությունների թվաքանակի դինամիկան Գծապատկեր 1-ի միջոցով:



Գծապատկեր 1. ՀՀ ՓՄՁ ոլորտի արդյունաբերական կազմակերպությունների թվաքանակը (2008-2018թթ.)[1]

Գծապատկեր 1-ի տվյալները վկայում են, որ 2018թ-ին՝ 2008թ. համեմատությամբ, ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի արդյունաբերական կազմակերպությունների թվաքանակն ավելացել է 578-ով: Ինչպես տեսնում ենք, 2012-2017թթ-ին նկատվել է ՓՄՁ ոլորտի արդյունաբերական կազմակերպությունների թվաքանակի կայուն և համաչափ աճ: Ապագայում նմանօրինակ աճի միտումների պահպանման դեպքում իսկապես կարող են որոշակի դրական տեղաշարժեր արձանագրվել նաև ՀՆԱ-ում ՓՄՁ-ների տեսակարար կշռի կտրվածքով: Ստորև ներկայացնենք նաև ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում Գծապատկեր 2-ի միջոցով:

[1]Գծապատկերում ներկայացված ՀՀ ՓՄՁ ոլորտի արդյունաբերական կազմակերպությունների թվաքանակի վերաբերյալ տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018թթ. հունվար-դեկտեմբերին» տարեկան հրապարակումները, http://www.armstat.am :



Գծապատկեր 2. ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (2008-2017թթ.)[1]

Գծապատկեր 2-ի տվյալներից երևում է, որ 2017թ-ին՝ 2016թ. համեմատությամբ, տեղի է ունեցել ՀՆԱ-ում ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշռի աճ՝ 1.4 տոկոսային կետով: Կարծում ենք, ՓՄՁ ոլորտում հարկային վարչարարության կատարելագործման, ֆինանսական ռեսուրսների մատչելիության բարձրացման և պետական մակարդակով ՓՄՁ-ների ինովացիոն գործունեության խթանման պարագայում ՀՆԱ-ում ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշռի աճը կլինի ավելի շոշափելի՝ նպաստելով ազգաբնակչության կենսամակարդակի բարելավմանը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ՓՄՁ ոլորտի խթանման հիմնական նպատակներն են հանդիսանում.

- արտադրության ծավալների զգալի աճը,
- ստվերային տնտեսության ծավալների կրճատումը,
- ձեռնարկությունների մրցակցության բարձրացումը,
- հայրենական ապրանքների որակի բարձրացումը,
- արտահանման ծավալների աճը,
- մարզերի համաչափ զարգացման ապահովումը,
- արտադրական հզորությունների արդիականացումը,
- արտադրության դիվերսիֆիկացումը և այլն:

[1] **Арамян А.** Плоды господдержки «малышей»? // Общественно-политическая газета «Голос Армении», 15.07.2016, http://www.golosarmenii.am/article/43163/plody-gospodderzhki-malyshej .

Այժմ ներկայացնենք նաև ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հիմնական ցուցանիշները ստորև բերված Աղյուսակ 1-ի միջոցով:

Աղյուսակ 1

ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հիմնական ցուցանիշները (2014-2017թթ.)[1]

Անվանումը	2014	2015	2016	2017
Ակտիվ հարկատուների թվաքանակը	74365	75956	78246	82209
Աշխատատեղերի թիվը	370269	365262	302001	246702
Ֆինանսական շրջանառության ծավալը, մլն ՀՀ դրամ	1 565 934, 0	1 610 772, 1	1 817 268, 1	1 920 300, 0
Վճարված հարկերի գումարը, մլն ՀՀ դրամ	237 710, 0	275 529, 5	393 855, 2	209 400, 0

Աղյուսակի տվյալները վկայում են, որ 2017թ-ին՝ 2014թ. համեմատությամբ, ՓՄՁ ոլորտի ակտիվ հարկատուների թվաքանակն ավելացել է 7844-ով, ֆինանսական շրջանառության ծավալը՝ 354 366 մլն դրամով: Միաժամանակ, ՀՀ ՓՄՁ ոլորտում աշխատատեղերի թիվը կրճատվել է 123 567-ով, իսկ վճարված հարկերի գումարը՝ 28 310 մլն դրամով, ինչն, անշուշտ, ցանկալի երևույթ չէ: Հուսանք, որ ապագայում ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հիմնական ցուցանիշներն աստիճանաբար կբարելավվեն՝ նպաստելով ՓՄՁ մրցունակության մակարդակի բարձրացմանը և երկրի տնտեսության զարգացմանը:

Նշենք նաև, որ չնայած ՀՀ ՓՄՁ-ների դերը հարկային եկամուտների ապահովման գործում բավական համեստ է (շուրջ 20%), այդուհանդերձ, դրանք տնտեսության համար լուծում են կարևորագույն խնդիր, ապահովում են մասնավոր հատվածի զբաղվածության շուրջ 64,7%-ը: Վերջին ժամանակահատվածում ընտանեկան ձեռնարկություններին, SS ոլորտի

[1] Աղյուսակը կազմվել է ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կայքում տեղադրված պաշտոնական տվյալների հիման վրա, http://mineconomy.am/hy/449:

ստարտափներին և սահմանամերձ բնակավայրերում ձեռնարկություններին հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում տեղի են ունեցել մի շարք դրական տեղաշարժեր: Մասնավորապես, ընտանեկան ձեռնարկությունների թիվը 2016թ-ին աճել է մոտ 9 անգամ՝ 156-ից հասնելով 1553-ի, ավելացել է նաև սահմանամերձ վայրերում գործող ձեռնարկությունների թիվը՝ 287-ից հասնելով 813-ի (կամ մոտ 2 անգամ): Միաժամանակ, վավերացում անցած SS սկսնակ ընկերությունների թիվն աճել է 20-ից մինչև 170 (կամ մոտ 8 անգամ) [1]:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ՀՀ կառավարության համար հրատապ է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտների վերացումը՝ շարունակաբար բացահայտելով և ներդնելով աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ[2]: Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն: Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին ուղղված պետական աջակցության ծրագրերը հիմնված են Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է: Այս առումով փոքր և միջին ձեռնարկատիրությունն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության ժամանակակից ենթակառուցվածքները և գործուն մեխանիզմներն անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծում փոքր և միջին ձեռնարկատիրության հեռանկարային զարգացման համար՝ ուղղված գիտատար և նորարարական արտադրությունների աջակցմանը, տեխնոլոգիաների փոխանցման համար

---

[1] **Պատվականյան Հ.** Զեկույց. Ակտիվ հարկատու է ՓՄՁ-ների ընդամենը 57%-ը, http://www.banks.am/am/news/interviews/14854 :

[2] Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն, http://www.innovcentre.am/hy/bussiness/index :

նպաստավոր պայմանների ձևավորմանն ու փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը: Ստորև ներկայացնենք Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված աջակցության վերաբերյալ վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 2

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված աջակցության քանակը (2010-2018թթ.)[1]

Տրամադրված աջակցության ուղղություն	Տրամադրված աջակցության քանակ								
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	30	95	209	462	536	403	152	464	313
Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ	694	-	515	521	500	407	126	246	314
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	6872	3588	7398	15647	13064	11857	8417	10337	8010
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորություններ տրամադրում	13	28	150	243	235	176	18	81	64
ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ	67	69	191	243	154	259	193	348	229

[1] «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018 թվականների ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, https://www.smednc.am/am/content/reports/ :

գործունեության շրջանակներում									
Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում	14	17	44	127	18	25	11	11	49
Ընդամենը	**7690**	**3797**	**8507**	**17000**	**14507**	**13127**	**8917**	**11487**	**8979**

Աղյուսակ 2-ից երևում է, որ 2018թ-ին՝ 2010թ. համեմատությամբ, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության քանակն ավելացել է 283-ով, տեղեկատվական և խորհրդատվական աջակցությունը՝1138-ով, սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրումը՝ 51-ով, ՓՄՁ միջազգայնացման գծով՝ 162-ով, ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրման գծով՝ 35-ով: Միաժամանակ, ուսուցողական աջակցության նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված աջակցության քանակը նվազել է 380-ով:



Գծապատկեր 3. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված աջակցության քանակը (2010-2018թթ.)[1]

[1] «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018 թվականների ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, https://www.smednc.am/am/content/reports/ :

Աղյուսակ 2-ի և Գծապատկեր 3-ի տվյալներից երևում է, որ 2018թ-ին՝ 2010թ. համեմատությամբ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված աջակցության ընդհանուր քանակն ավելացել է 1289-ով: Այս ցուցանիշի գծով կտրուկ նվազեցում է արձանագրվել 2011թ-ին (3797), այնուհետև, 2012-2013թթ. նկատվում է զգալի աճ, 2014-2016թթ.՝ կրկին նվազեցում, 2017թ-ին՝ 2016թ. համեմատությամբ նկատվում աճ՝ 2570-ով, և վերջապես, 2018թ-ին՝ 2017թ. համեմատությամբ նկատվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված աջակցության ընդհանուր քանակի կրկին նվազեցում՝ 2508-ով:

Նշենք նաև, որ ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ: 2017 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը համաձայնագրեր է կնքել և համագործակցություն հաստատել հետևյալ կառույցների հետ. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Ստարտափ Արմենիա հիմնադրամ և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA) ծրագիր, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն, Ռուսաստանի Դաշնության Նորարար տեխնոլոգիաների կենտրոն և այլն:

2018թ. կնքվել է 8 համագործակցության համաձայնագիր: Կնքված համաձայնագրի հակիրճ նկարագրությունը ներկայացված է ստորև.

- Չեխական արտադրության հակասնկային կոսմետիկ միջոցի ներմուծում Հայաստան,
- Իսպանական գյուղատնտեսական արտադրանքի կատալոնական կլաստերի հետ համագործակցությամբ ՓՄՁ-ների և եվրոպական կլաստերների միջև նորարարության և գիտահետազոտական ծրագրերի մշակում՝ գյուղատնտեսական արտադրանքի մշակման ոլորտում,
- Մալթայից SS ընկերության պատվերով լրացված իրականության ոլորտում ծրագրերի մշակում,
- Հայկական արտադրության չոր թեյերի արտահանում Գերմանիա,
- Հայկական արտադրության չոր ուրցի արտահանում Գերմանիա,
- Հայկական արտադրության չորացրած բույսերի արտահանում Գերմանիա,
- Իսպանական արտադրության սննդային հավելումների ներմուծում,

• Տեխնոլոգիական համագործակցություն հայկական և ռուսական ընկերությունների միջև՝ բջջային հավելվածի մշակման բնագավառում:

Ինչպես հայտնի է, ցանկացած երկրի տնտեսության զարգացման գործընթացում ՓՄՁ-ների դերն առաջին հերթին որոշվում է ՀՆԱ-ում փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշռով (Գծապատկեր 2), այնուհետև, զբաղվածների մեջ ՓՄՁ տեսակարար կշռով, պետական բյուջե վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մեջ ՓՄՁ տեսակարար կշռով, արտահանման ընդհանուր ծավալում ՓՄՁ տեսակարար կշռով և մի շարք այլ ցուցանիշներով: Ստորև ներկայացնենք զբաղվածների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռը, ինչպես նաև պետական բյուջե վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռը գծապատկեր 4-ի և 5-ի միջոցով:



Գծապատկեր 4. Զբաղվածների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռը (2008-2017թթ.)[1]

Գծապատկեր 4-ից երևում է, որ 2015թ-ին՝ 2008թ. համեմատությամբ, զբաղվածների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռն ավելացել է 0.9 տոկոսային կետով, սակայն, 2016թ-ին՝ 2015թ. համեմատությամբ, նշված ցուցանիշը նվազել է 13.1 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է ՓՄՁ ոլորտի ընկերությունների վերակազմակերպման և սնանկացման (տնտեսության անառողջ հատվածի կրճատման) գործընթացներով: Այնուհետև, 2017թ-ին՝ 2016թ. համեմատությամբ, դիտարկվող ցուցանիշն ավելացել է 0.4 տոկոսային կետով: Ինչպես տեսնում ենք, 2017թ-ին՝ 2008թ. համեմատությամբ, զբաղվածների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռը նվազել է

[1] Գծապատկերում ներկայացված տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կայքում տեղադրված պաշտոնական տվյալների (http://mineconomy.am/hy/449), ՀՀ ԱՎԾ հրապարակումների և մի շարք այլ լրատվական աղբյուրների տեղեկատվության հիման վրա:

11.8 տոկոսային կետով: Հաշվի առնելով ՀՀ տնտեսության մեջ 2017-2019թթ. տեղի ունեցող դրական տեղաշարժերը, կարող ենք կանխատեսել նաև այս ցուցանիշի որոշակի բարելավման հնարավորությունը:

Այժմ անդրադառնանք պետական բյուջե վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մեջ ՓՄՁ տեսակարար կշռին (Գծապատկեր 5):



Գծապատկեր 5. Պետական բյուջե վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռը (2008-2017թթ.)[1]

Գծապատկեր 5-ի տվյալները վկայում են, որ 2016թ-ին՝ 2008թ. համեմատությամբ, պետական բյուջե վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռն ավելացել է 6.9 տոկոսային կետով: Այնուհետև, 2017թ-ին՝ 2016թ. համեմատությամբ, դիտարկվող ցուցանիշը նվազել է 18.2 տոկոսային կետով: Ինչպես տեսնում ենք, առավելագույն ցուցանիշն արձանագրվել է 2016թ. (34.9%), իսկ նվազագույնը՝ 2017թ. (16.7%): Հուսանք, որ 2018-2019թթ. ՀՀ պետական բյուջե վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մեջ ՓՄՁ տեսակարար կշռի ցուցանիշը նույնպես որոշակիորեն կբարելավվի՝ պայմանավորված գործարար միջավայրի որոշակի բարելավմամբ, հարկային վարչարարության կատարելագործմամբ և մի շարք այլ գործոններով:

Հաշվի առնելով երկրի ներքին շուկայում սպառման փոքր հնարավորությունները և առևտրի աշխարհաքաղաքական

[1] Գծապատկերում ներկայացված տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կայքում տեղադրված պաշտոնական տվյալների (http://mineconomy.am/hy/449), 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017թթ. «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքների (http://www.parliament.am/), ՀՀ ԱՎԾ հրապարակումների և մի շարք այլ լրատվական աղբյուրների տեղեկատվության հիման վրա:

սահմանափակումները՝ ՓՄՁ արտադրության ծավալների մեծացմանը կարող են նպաստել արտահանման ծավալների ավելացումը և արտահանման աշխարհագրության ընդլայնումը կամ շուկաների դիվերսիֆիկացումը: ՀՀ արտահանման ընդհանուր ծավալում ՓՄՁ տեսակարար կշիռը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:



Գծապատկեր 6. ՀՀ արտահանման մեջ ՓՄՁ տեսակարար կշիռը (2008-2017թթ.)[1]

Գծապատկեր 6-ից երևում է, որ 2017թ-ին՝ 2008թ. համեմատությամբ, ՀՀ արտահանման մեջ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռն ավելացել է 4.5 տոկոսային կետով: Հայաստանի Հանրապետության ԵԱՏՄ-ին անդամակցությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության հանդեպ սահմանված շարունակական պատժամիջոցներն ու մի շարք այլ տնտեսական ու քաղաքական իրադարձությունները, զգալիորեն նպաստել են ՀՀ արտահանման ծավալների ավելացմանը (այդ թվում նաև ՓՄՁ ոլորտի ընկերությունների արտադրանքների): Կարծում ենք, 2018-2019թթ. կտրվածքով դիտարկվող ցուցանիշը նույնպես կբարելավվի, քանի որ ՀՀ-ում որոշակիորեն աճել են նաև իրականացվող ներդրումների ծավալները:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ակտիվացման հետևյալ ուղիները.

1. Փոքր և միջին ձեռնարկություններին 1-5 տարի ժամկետով տրամադրել հարկային արձակուրդներ՝ կախված նրանց ֆինանսատնտեսական վիճակից, մասնավորապես՝

- սնանկացման վտանգի դեպքում (1-5 տարի),
- ֆինանսական առողջացման ժամանակահատվածում (մինչև 1 տարի),

[1] Գծապատկերում ներկայացված տվյալները հավաքագրվել են ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կայքից, ինչպես նաև մի շարք այլ լրատվական աղբյուրներից:

- առանձնացման և բաժանման ճանապարհով վերակազմակերպման դեպքում (1-3 տարի),

2. նոր պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերին (ԱՁ) 2 տարի ժամկետով ազատել հարկերի վճարումից (Ռուսաստանի Դաշնությունում այս կարգը գործում է 2017թ-ի հունվարի 1-ից),

3. ստվերային տնտեսության ծավալների կրճատման նպատակով հնարավորության դեպքում նվազեցնել հարկային դրույքաչափերը, մասնավորապես, մինչև 150 000 դրամի չափով եկամտի ստացման դեպքում եկամտահարկի կիրառվող 20%-անոց դրույքաչափը նվազեցնել մինչև 18%:

Այսպիսով, փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ակտիվացումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն ՀՀ տնտեսության հետագա զարգացման համար, հետևաբար, դիտարկված հիմնահարցերը պետք է գտնվեն պետության և հասարակության մշտական ուշադրության ներքո:

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Արմինե Գրիգորի Զախարյան
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ակտիվացման հիմնախնդրին: Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման վրա ՓՄՁ ոլորտի ազդեցությունը՝ հոդվածում փորձ է արվել բացահայտել փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ակտիվացման միջոցով ՀՀ տնտեսական վիճակի հետագա բարելավման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է հատկացվել ՀՀ տնտեսության մեջ ՓՄՁ-ների դերի մեծացման, ազգաբնակչության զբաղվածության խթանման, հարկային վարչարարության կատարելագործման, ՓՄՁ ոլորտի խթանման պետական քաղաքականության արդյունավետ իրագործման հիմնախնդիրներին: Քանի որ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ակտիվացումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն ՀՀ տնտեսության զարգացման համար, ապա վերջինս պետք է գտնվի պետության և հասարակության ուշադրության կենտրոնում:

Բանալի բառեր՝ տնտեսություն, փոքր և միջին ձեռնարկություններ, ՀՆԱ, ներդրումներ, հարկեր, քաղաքականություն, պետություն, արդյունավետություն, զարգացում:

РОЛЬ МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЙ В ПРОЦЕССЕ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ РА

Армине Григорьевна Захарян
Научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА,
кандидат экономических наук

Аннотация

Настоящая статья посвящена проблеме активизации деятельности малых и средних предприятий в Республике Армения. Учитывая влияние сферы МСП на развитие экономики РА, в статье сделана попытка выявления возможностей дальнейшего улучшения экономического положения РА посредством активизации деятельности малых и средних предприятий. Особое внимание уделено проблемам повышения роли МСП в экономике РА, стимулирования занятости населения, совершенствования налогового администрирования, эффективного осуществления государственной политики стимулирования сферы МСП. Поскольку активизация деятельности малых и средних предприятий имеет важное стратегическое значение для развития экономики РА, то оно должно находиться в центре внимания государства и общества.

Ключевые слова: экономика, малые и средние предприятия, ВВП, инвестиции, налоги, политика, государство, эффективность, развитие.

THE ROLE OF SMALL AND MEDIUM-SIZED ENTERPRISES IN THE PROCESS OF DEVELOPMENT OF THE ECONOMY OF RA

Armine Grigori Zakharyan
Research Associate of M. Kotanyan Institute of Economics of NAS RA,
Candidate of Economic Sciences

Abstract

This article is devoted to the problem of activating the activities of small and medium enterprises in the Republic of Armenia. Given the influence of the SME sector on the development of the economy of the Republic of Armenia, the article attempts to identify opportunities for further improving the economic situation of the Republic of Armenia through the revitalization of small and medium enterprises. Particular attention is paid to the problems of increasing the role of SMEs in the Armenian economy, promoting employment, improving tax administration and the effective implementation of state policies to encourage SME sphere. Since the revitalization of the activity of small and medium enterprises is of great strategic importance for the development of the economy

of the Republic of Armenia, it should be in the center of attention of the state and society.

Keywords: economy, small and medium enterprises, GDP, investments, taxes, politics, government, efficiency, development.